

ԱՌՍՆՈՐԻՍՏՐՈՒԹԻՒՆ

| | |
|---------------|-------|
| Պաշխարիոյ | հաւար |
| Տարեկան | 12 Ժր |
| Վեցամսեայ | 6 » |
| Արտասահմանի | |
| հաւար տարեկան | 15 » |
| Վեցամսեայ | 8 » |

| | |
|-----------|--------|
| Աւերիկայի | հաւար |
| Տարեկան | 3 ՏՂԻ |
| Վեցամսեայ | 1.50 » |

Մանուրեան տղր տու
քին երեսին հաւար 10 ս.
վախ փերջին երեսի հա-
ւար 20 սակրիւ է. երե
մեկ անէջի սակրաւնեռա
հաւար 20 0/0 գեղջ կըլ
լայ:

Վառնայի հաւար ձեռք 10 սակրիւ

ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՍԻՆԻ ԿՈՄՍՈՒՄԻՏԵՆ

ԿԸ ՀՐ ՏՐՈՒՄԻՆԻ ՉՈՐԵՔԵՂԱԹԻ ԵՒ ՇՈՒՄԻՆԻ ՕՐԵՐԸ

Նախկին եր զրաւ դ. կի
Խնրագրութեան հաս-
ցիկն

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պաշխարիոյ հաւար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ յնն տրուիր

ՇՈՒՄԻՆԻ ԿՈՄՍՈՒՄԻՏԵՆԻ ԳՐՈՒՄԻՆԻ ՉՈՐԵՔԵՂԱԹԻ ԵՒ ՇՈՒՄԻՆԻ ՕՐԵՐԸ

Ի Ն Պ Ա Ս Տ

Հ. Յ. ԳՈՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ

Թերթիս խմբագիր Պ. Վարդո
Յիւրիպէ ի նպատակ Հ. Յ. Գոշնակ-
ցուի թեան հանգանակութիւն բա-
ցած ըլլալով միայն փոքր շրջա-
նի մը մէջ հանգանակած է
1000 Ֆր. Ե աւելի:

Յուսով ենք թուղարիոյ միւս
քաղաքներն ալ կը կատարեն ի-
րենց պարտականութիւնը դէպի
Հ. Յ. Գոշնակցութիւնը՝ աջակ-
ցելով անոր և անոր ներկայա-
ցուցիչներուն թէ նիւթապէս և
թէ բարոյապէս:

Է. ԱՎԻՈՒՂԻ

ԿՈՎԿԱՍՏԱՆՍ ԿԵՐԲԵՐՈՒ

Գինը համար դիմել Վառնա Բա-
կէն Սիւնի ընթացքարանին վար-
չութեան: Ծանապարհածախսը
գնողին վրայ է: Դրամը կանխիկ
վճարելի:

ԱՌԱՋՆՈՐԴԸ

Քաղաքակիրթ երկիրներու մէջ
մեծ միտքեր աճագին ջանքեր կը
թափեն ապացուցանելու համար,
թէ անիշխանականութիւնը զիս-
սակար վարդապետութիւն մըն է:
Ուրիշ կրպէ կը պնդուի, որ
երբ մարդկութիւնը հասնի քա-
ղաքակրթութեան բարձրագոյն
աստիճաններուն՝ անիշխանակա-
նութիւնը անխուսափելիօրէն պի-
տի գառնայ տիրապետող հասա-
րակական օրէնքը:

Հայերս, որ գեռ կը գտնուինք
կիսակիրթ ժողովրդի մը զարգաց
ման աստիճանին վրայ, արդէն
հիմա սկսեր ենք սիրել անիշխա-
նական գրութիւնը: Մեր հասա-
րակական կեանքի մէջ այս երե-
ւոյթը ապացուցանող շատ օրի-
նակներ կան: Առանց հեռուն ել-
թալու ակնարկ մը նեանք թուլ-
գարահայ գաղութի միւնչն, հիմա
ապրած ազգային կեանքին վը-

րայ և մեր ըսածը հաստատուած
կը գտնենք: Հոս չէ եղած բարձ-
րագոյն վարչութիւն մը, որ իր
վրայ վերցնելով որոշ պատաս-
խանատուութիւններ և վայելելով
պաշտօնական մարմնի իրաւունք-
ները յառաջ մղէր ազգային գոր-
ծերը ու հոն հետք մը ձգէր: Եւ ու-
տոր համար է, որ մեր մէջ մին-
չեւ այսօր կողացած են գարո-
ցական ու թաղային գործերը:
Գոնէ չափով մը այս բոլորին
տեղեւը առնելու և մեր ազգային
գործերուն նպատակաւ մար ու
հաստատ ուղղութիւն մը տալու
համար յաջող քայլ մըն էր ա-
ռաջնորդական վարչութեան մը
հաստատութիւնը Բուլղարահայ
վիճակին համար: Առանց նաեւ
պետի նաւը կը խորտակուի բաց
չուրին վրայ: Պէտք էր մեր ազ-
գային գործերու զեկը յանձնել
ձեռնհաս պաշտօնեայի մը, որ
իր կոչման բերմամբ վարէր և
առաջնորդէր մեր գործերը: Այս
տեսակէտով ներքէս եպիսկոպոս
Աստուանի պէս կարող եկեղե-
ցականի մը ընտրութիւն, նոյն-
պէս յաջող քայլ մըն էր, որ ա-
ռաւ բուլղարահայ գաղութը:
Սակայն ընտրութենէ ետք ահա
անցան ամիսներ և դեռ չէ եկած
նորընտիր առաջնորդը, չնայե-
լով, որ այնքա՞ն խնդիրներ մը-
նացած են սոկայս և կը կարօ-
տին առաջնորդին միջոցաւ ան-
միջական լուծման մը:

Սօֆիայի մէջ հաւաքուող պատ-
գամաւորական ժողովը ցրուելէ
տուալ կազմած էր տեժամանակ-
եայ մասնախումբ մը առաջնոր-
դարանի գործերը վարելու և ա-
ռաջնորդին պէտք եղած դիւ-
րութիւնները տալու համար,
բայց այդ մասնախումբի գոր-
ծունէութեան մասին մենք գեռ
ո և է բան չիմացանք: Կըսուի թէ
պատրիարքական այցելու հովիւր
Եսասէր նկատումներէ և անձնա-
կան հարաբերութիւններէ գրողուած մաս-
նախումբը ժողովի չէ հրաւիրած:
Ուրեմն ո՞վ պիտի խորհի առաջ
նորդին օր առաջ իր պաշտօնա-
տեղին հասնելուն մասին: Ծար-

րական պարտաճանաչութեան
զղացմունքը կը պահանջէ, որ
առաջնորդին զրկուի պէտք եղած
ճանապարհածախսը և խնդրուի,
օր առաջ զալ իր պաշտօնատե-
ղին: Սակայն ո՞վ պիտի զրկէ
այդ դրամը: Քանի որ մասնա-
խումբը սեէ գործ չի ուզեր կա-
տարել մեր կամիքով Սօֆիա
գացող պատգամաւորները իրա-
րու հետ խորհրդակցելով այս
մասին պէտք է ձեռնարկեն նա-
խապարտատական աշխատու-
թիւններու և փութացնեն առաջ-
նորդին գալը:

Պատրիարքարանը և բուլղար
կառավարութիւնը վաւերացու-
ցած են ներքէս եպիսկոպոսի
ընտրութիւնը, ուստի ո և է բա-
նական պատճառ չկայ խնդիրը
ձգձգելու: Կամաց կամաց գոր-
ծելէն երբէք բարիք չէ ծնած:
Ուրեմն շարժիք և օր առաջ ա-
ռաջնորդը կոչուք իր պաշտօ-
նին զուլքը:

Ազգային գործերու շահերը
այս կը պահանջեն: Վե՞րջ ան-
իշխանական գրութեան, մեզ
պէտք է ձեռնհաս վարչութիւն
մը, որու համար սակայն առաջ-
նորդին շուտով մեր մէջ երե-
ւայր անհրաժեշտ է:
Մարգարէտնի

ՆՄՈՅՆԵՐ

ԿՈՎԿԱՍՏԱՆՍ ԳՐՈՒՄԻՆԻ ՉՈՐԵՔԵՂԱԹԻՆԷՆ

Էն ամպի նման խուլ որոտուով...
Սիրաս գարգով լի՝ կոխ գնացի:
Էն ամպի նման մէտուտ սարերով,
Քուրիկ ջան, քեզնէն հեռու՝ գնացի...
Էլ մի՛ որոնիր քու ազիզ եարին
Կուէն յետ դարձող կտրիճների մէջ:
Ա՛խ, մենակ փնարի՛ր իմ քաջ սեռու-
կին
Անտէր խրխնջող լուռ դաշտերի մէջ...
Էլ մի՛ որոնիր քու ազիզ եարին
Իմ ընկերների ուրախ խնջոյքում,
Բարձրիկ սարերէն ուռնացող քամին
Վերաս մի բուռ հող կը զցէ դաշ-
տում...
Ու օտար մէրեր ինձի տես կը գան,

Սեւ հողիս վերայ արցունք կը թա-
փեն:
Ա՛խ, օտար քուրեր ինձի տես կու-
գան:
Ու փրաս անուշ ծաղկունք կը թա-
փեն...
Աւե՛տիք Խաւսակ՝ան
(Մուրճ)

ՍՍՍՈՒՆԻ ՀԱՅ ԲԵԱԿՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՏՐՈՒՄԸ ԽՆԴՐՈՒԹԻՐԸ

Ա. Ն. Վ. Հիւպատոս, ներկայա-
ցուցիչ անգլիական հօր կառավա-
րութեան
Մուշ

Վեճու թիւն

Մեծ հրճուանքով է որ լսեցինք
ձեր Մուշ գալու լուրը, ձեր հօր ու
մարդասէր կառավարութեան կողմէ,
մտէն ճանշնալու համար մեր դրժ-
բաղք ազգին զրուցիւնը, տեղեկա-
նալու համար այն շարեաց ու տառա-
պանքներուն, այն անթիւ զրկանք-
ներուն ու խայտառակութեանց ու-
րոնց ենթակայ կըլլայ ան: Մենք կը
յուսանք եւ մասնաւոր կը հուսաւոր
ի ձեզ թէ պիտի հաճիք ուղղակի
գալ միւր մօտ ձեր աչքերով տեսնե-
լու մեր շարչարանքներն ու զրկանք-
ները: Չի կարելի չէ ի նեւուստ ճըշ-
գիտ քաղաքար մը կազմել ու թուղ-
թի վրայ նկարագրել զանոնք: Եւ
ապա, նկատելով որ ամէն կողմէ
պաշարուած ենք եւ Մուշ կամ դաշտ
երթալու համար չըջարեութիւնը
մեզի արգելուած է, եթէ երբէք յա-
ջողէինք իսկ ձեզի զրել մեր տառա-
պանաց նուազագոյն մէկ մասը,
իսկ տարակուսելի է որ յաջողե-
ինք մեր խնդրագիրը առ ձեզ հաս-
ցնել, քանի որ կառավարական լր-
տեսներ պիտի հետեւէին մեզի ու
պիտի արգիլէին ձեզի մօտենալ: Բայց
տեսնելով որ, Վեճու թիւն, կը յա-
պաղիք մեր մօտ գալ, ամէն վտանգ
կընդստանենք ու կը փորձենք ներկա-
յայնել ձեզ գէթ ամիտի նկարագ-
րութիւնը մեր անցիալ ու ներկայ
կացութեանը:

1. Մենք, Սասուն գաւառին ամ-
բողջ հայ բնակչութիւնս, անլուր
տառապանքներու ենթարկուած ենք
երկու տեսակ կառավարութիւններու
ձեռքով առաջինը թուրք կառավա-
րութիւնն է, եւ երկրորդը քիւրտ
պէյերու կառավարութիւնը:
2. Թուրք կառավարութիւնը, ու-
րուն պետերը Մուշ կը նստին, իսկ

ներկայացուցիչները մեր գաւառին Տարիկ գիւղը, իր մեծ ու փոքր բոլոր պաշտօնէութեամբ ամէն միջոց կը գործադրէ մեր գաւառին հայերը լեռներու եւ ձորերու մէջ արգիլելու համար:

3. Մեր գաւառը ամբողջ աշխարհ գիտէ, չի կրնար իր բնակիչները լոկ իր եկամտաներով կերակրել: Մենք, հայերս, եթէ սովորած կորնչիլ չենք ուզիր մեր փայտերուն վրայ, պարտաւոր ենք Մուշ, դաշտ կամ այլուր երթալ աշխատելու, քիչ մը ստակ ճարելու, որուն մէկ մասը մեր իսկական պէտքերուն եւ միւսը կառավարութեանց վճարելիք տուրքերուն կը յատկացնենք: Նոյնպէս, մեր մօտ չի գտնուիր մեր սնունդին ու հագուստին անհրաժեշտ նիւթերը: Պէտք է Մուշ երթանք կամ այլուր, զանոնք բերելու համար: Բայց թուրք կառավարութիւնը բացարձակապէս արգիլած է ժողովրդին երթելու թիւրք: Տալուրիկի բոլոր բնակիչները, մեծ ու փոքր, ինչպէս նաեւ Հիւսիւսի գիւղերուն բոլոր ծանօթ ու չափահաս անձերը—Շէնիք, Սէմուլ, Կեղաշէն, Հուշմանբկ, Կէլէկկիզան, Ախպէս, —իբր փախտական ու յանցարար նկատուած են, չենք գիտեր որ յանցարարներն համար, ու չեն կրնար ազատուիլ Մուշ կամ այլուր երթալ, կառավարութիւնը զանոնք ճանչցածին պէս կը բանտարկէ: Ուստի հիւսիւսի այդ գիւղերէն միայն կրնան ու պատաններն են որ ստիպուած են Մուշ երթալ, կառավարութիւնը անոնցմէ ալ չատեր կը ձերբակալէ, եւ շարժրկելէ հոգը կարձակէ լոկ պախչիչներ պանալով, երբեմն ալ տարիներով կը պահեն գանձոք: Այս քուտածը կրնաք դուք իսկ հաստատել, այցելելով Մուշի, Պիթիսի եւ Սղերդի բանտերը:

Երթելու թիւրքն այս արգիլքին հետեւանքով անթիւ գրկանքներու ենթարկուած ենք:

3. Եթէ կառավարութիւնը գիտնար զէթ այդչափ հարստահարութիւններով գոհ մնալ, եթէ տուրք չի նաւաքեր, կրնայինք համակամօրէն կրել այդ գրկանքները: Բայց իրողութիւնը այսպէս չէ: Տարին տասերկու ամիս կառավարական հարկահաւաքները մեր տուններն են ու միշտ դրամ կը պահանջեն բռնութեամբ: Սնկարելի է չի վճարել, երբ քեզ տայինք էք, կրենն, կրկան ձեռնը, ստիպուած ենք վճարել ինչպէս որ ըլլայ: Սակայն ուրիշ կարելի է դրամ հայթայթել, քանի որ մեր մէջ ոչ ոք դրամ ունի: Յուսահատ կը զիմենք շրջակայ քերտ աղաներուն, որոնցմէ չափազանցօրէն բարձր տոկոսներով դրամ փոխ կառնենք: Այս կերպով մեր արտադրութեանց մեծագոյն մասը քերտ աղաներու սեփականութիւնը կը գտնայ:

4. Երբ գարունը գայ, կառավարութիւնը ծխարկէքիւրէն եւ ուրիշ տեղերէ անհասար քերտ ցեղեր բերել կուտայ, զորս կը հաստատէ մեր շրջակայ լեռներուն ու ձորերուն մէջ: Այս ցեղերն են Բագրան, Պատիկան, Իօշղուն, Ուսուան, եւն, Ասոնք իրենց վրանները ամէն տեղ կը հաստատեն ու իրենց արջառներով կը ծածկեն մեր լեռներն ու ձորերը: Ալ մեզի համար ճշմարիտ հոգեվարքի փամբ են որ կապրիւք, մեր երթելու թիւրքը վերջնականապէս կը դադրի, ոչ ցերեկ ու ոչ գիշեր ատեն կրնայ հայ մը անոնց գտնուած կողմէն անցնիլ, կամ անոնց մօտենալ, անմիջապէս կը կեցնեն կը սպաննեն ալ, նոյնիսկ մեր գիւղերուն մէջ ապահով չենք կրնար ապրիլ:

5. Այս վայրենի քերտ ցեղերը միայն ճամբանի գոցելով եւ մեր երթելու թիւրքը խափանելով չեն գոհանար: Մեր գաշտերուն մեծագոյն մասը լեռներու մէջ կը գտնուի, քերտերը իրենց արջառներով կը յափշտակեն մեր խոտերը ու կոշիչացնեն մեր բոլոր հունձքը կիրացնեն եւ եթէ միջոց գտնեն, կը յափշտակեն ու կը տանին նաեւ մեր ոչխարներն ու արջառններ, կառավարութիւնը միշտ խուս կը մնայ մեր անվերջ գանգաւաներուն ու ալ աւելի կը քաջալերէ քերտերը:

6. Չենք գիտեր ինչ օրէնքով քերտ աղաները մեզի այնքան յիստներ պատճառելի ետքը, կուգան կը պահանջեն մեր հունձքերուն ու ոչխարներուն վարձքը, կարծես հոգին սեփականատէր բլրային: Բիրտ աղաները հունձքի ասին պիղը կը շրջին զինեալ խմբերով ու զանազան անուններու տակ տուրքեր կը սահմանեն ու կը ստանան մեր քրտիւքին մեծագոյն մասը: Կառավարութեան կը զիմենք, որպէսզի ազատ զմեզ այս անթիւ ապօրինի տուրքերէն, բայց անիկայ միշտ անտարբեր կը մնայ:

7. Եթէ այս քերտ աղաներուն գոռուարութիւնները յարուցանենք իրենց պահանջածը վճարելու եւ կամ պատահի որ գոհացում չիտանար իրենց, կը հրդեհեն մեր գոմերը, կայրեն մեր հունձքերն ու չարացները, կը կողպտեն ձեռքերն ինկած հայերը, կը շարժարեն զանոնք ու կը սպաննեն, եթէ փորձենք գիւմադրել ու զէնքով մեր կեանքն ու իրաւունքները պաշտպանել: Եւստի կառավարութիւնը երեւան կուգայ, եւ մեզի «Ֆէտայիներու» տեղ զընելով, քերտերու նետ մեր վրայ կը յարձակի ու կը շարժէ, ինչպէս որ ըրաւ 1893ին, ամբողջ Սասունը արեամբ ողորկելով:

(Շարունակելի)

ՅԻՒԼԻՊԵՅԻ ԹԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՐԸ

Մասնախումբն ու իր պատասխանատուները: — Երկրորդ հոգաբարձուրդին ու իր գործերը:

Չենք կրնար անպատճառ պահանջել որ աս կամ ան մարդին բոլոր անդամներն ալ ըլլան հասկցող, կարող մարդիկ, Հասկցող մարդիկ կընարէ կամ կուտայ հասկցող հասարակութիւնը:

Մեր կեանքին մէջ մանաւանդ հոգաբարձու, թաղական են, քիչ անգամ բողոքն ալ կարող տարրերէ կազմուած կըլլան: Բայց մէկ — երկու մարդ չատ անգամ կրնան ուղղութիւն ցոյց տալ իրենց միւս ընկերներուն կամ ազգիկ անոնց վրայ:

Խնդիրն հոն է որ ատ ուղղութիւն ցոյց տուողները կամ ազգողները անկեղծ, անշահախախտ մարդիկ կըլլան:

Այս տեսակէտէն դատելով հրաժարող հոգաբարձութիւնը լաւ էր, բայց լաւ չէ մասնախումբը: Մասնախումբին մէջ այն, կան

բարի մարդիկ, որ իսկապէս կուզեն օգտակար ըլլալ, բայց ամեն բանէ առաջ փափաքելի էր որ ասոնց վրայ ազդողները ըլլային անկեղծ:

Արդ, ի՞նչ ըրաւ հոգաբարձութեան հրաժարուէն ետքը մասնախումբը — աւելի ճիշտ մասնախումբը միջոց անհատները, մէկ թէ երկուք —, ի՞նչ ըրաւ կը հարցնենք: — Առանց սպասելու որ նոր հոգաբարձութիւնը բնտրուի և առանց հասկնալ ու զգելու որ կրնայ Միքայէլիանը, իրբե ուսուցիչ, մեր աղոյց պէտք եղածին պէս օգտակար չի կրնար ըլլալ և նոյն իսկ հասարակութեան քիչ թէ շատ հասկցող մասը — որ պզտիկ թիւ չի կազմեր — գոհօք է: մեր մասնախումբը փոխարին անձնական սկզբնաւորաբար կամակամակա՞ն կապերը աչքի առնելու ետեւեւ և սխալօք կանչեց այս տարեշրջանին համար, եւ գիտէք, ի՞նչ վճարուեց — 100 իւլիանի ամսական 110 կամ 120 լէվը բարձրացնելով 18 իւլիան:

Հոս արդէն մասնախումբը դայթակողութեան քօրը իր ձեռքով զըրաւ, ձգենք այլեւս ան կէտը թէ իրաւունք ունի ինքը հոգաբարձութեան ընկերքը ընելու:

Եւ մասնախումբը ինքը կպու շարժառիթներն մէկը՝ ծագած խնդիրներուն, իսկ կրնար դէշ դերակատար մը, որուն կատարած գերիշխմէն մէկը սենսանք թղթակցութեանս առաջին մասին մէջ և միւսներն ալ կը տեսնենք հեղհեղեմէ:

Նոր հոգաբարձութեան ընտրութեան համար կառավարութեանն հրահանգ տուեցաւ մէկ-երկու ամիս առաջ:

Ընտրութեան օրը տեղացիներուն մեծ մասը ձեռնպահ մնացին և 200 քուէի տեղ 40-50 քուէ ձգուեցաւ, ուրեմն կանխապատրաստուած 30-40 ձայնով հոգաբարձու ընտրուեցան հիւգ անձնաւորութիւններ՝ չեմ գիտեր ինչ կանխատեսութիւնով: Աս նոր հոգաբարձութեան մէջ ալ կը պարկեւր աս պաշտօնին յարմար մարդիկ, եւ ասակաւին մէկ կողմ կը թողուցի զիստը՝ որ, զոնէ ասանկ գործերու համար, մեր հասարակութեան մէջ հիմնականօրէն գիւր կը խաղայ:

Աս երկրորդ հոգաբարձութիւնը, որ առաջին ամիսով պէտք էր հասարակութեան համակրանքը շահելու աշխատել, իր առած քայլերով բոլորովին հակառակ արդիւնք յատալ բերաւ:

Հոգաբարձութեան ուղղութիւնը — ինչպէս ասկէ առաջ ալ գրուած էր «Շարժում»-ի մէջ — պիտի ըլլար վաքժարանին մէջ ասին բանէ առաջ պուկարներն ու թ առ և փոխանակ պարահանգէցներով կամ եւալընով հասարակութեան վրայ բեռ ըլլալու, պիւտճէին համաձայն վարժարանը պէտք է կառավարել:

Ես չեմ ուզեր հերքելու խօսք մը անգամ փորձել այն անհեթեթ գաղափարը թէ՛ մեր խեղճ նախակրթարաններուն մէջ ցարդ եղածին աւելի ուժ արուի պուկարներն և հայերէնը մէկ կողմ ծալուի, գաղափար մը, որ հայ իրականութեան հանգէպ սփռելու Գլուխը պիւտճէիմ գոհանալու մտքին, ատ սլ աշխատութեան խոյս տալու կամ հոգաբարձութեան իր ուժերուն չի վստահելու պատճառ մը կը թուի ինձի, ուրիշ ոչինչ: Թող որ խնդիր է թէ՛ ատ պզտիկ պիւտճէն իսկ պիտի կրնար գոհացնել հոգաբարձութիւնը

երբ մօտ 4000 լէվ պարտք մը հիմա կը նշուրուի:

Թողունք ստոնք, զանք գործին, Պ. կրօն Միքայէլիան տեսնելով որ իր դիրքը խախտու է, առիթ վազեց, անգին վազեց, աղաչեց ու պաղատեցաւ հոգաբարձութեան անգամներէն ոմանց՝ որ հրաժարին, որպէսզի հոգաբարձութիւնը իր մեծամասնութիւնը կորսնցուէ և լուծուի: Երեւութապէս յաջողած կարծելով իր ըլանին մէջ, չի ճանչնար հոգաբարձութեան գոյութիւնը՝ երբ աս վերջինը կուգայ և կուզէ օրիորդները հրաժարեցնել: Ասոր վրայ հոգաբարձութիւնը ոտով կանոն կը հրաժարեցնէ օրիորդները և կրօնին առջև ալ վարժարանին գուաները կը վազէ չիմ բունընով անոր վկայական չուանալը և ատ ամիսը նախարարութեան մէկ թղթով:

Սկզբունքով հակառակ ըլլալով հանդերձ մեր մատաղ սերունդին կրթական գործը կրօնելու ձեռքը յանձնուելուն — ինչպէս ըսի ասկէ առաջ — միւս կողմ չեմ կրնար չի խոստովանիլ որ, անբարեխղճութիւն էր զանազան մարդ մուշի տեսնելով, ապաւինած օրէնքի և պաշտօնի ուժին՝ հրաժարեցնել շրջանին մէջ ուսուցիչներ և ուստիկանով ալ դուրս հանել, բար մը՝ որ հոգաբարձութեան պէս փոփոք և պատասխանատու պաշտօն մը ստանձնողները պէտք է խնայեն ուսուցչական վարկին:

Ես չեմ ուզեր խօսիլ այս տեսակ ընթացքի մը աղոց վրայ ունեցած շատ վէշ ազդեցութեան մասին:

Եթէ հոգաբարձութիւնը նպատակ ունէր վարժարանը աւելի լաւ դիրքի մէջ դնել, սղաքներու կրթական գործը տալ կարող և արժանաւոր ուսուցիչներու ձեռքը, այն ասին համարելով թիւրք ունենալու էր մինչեւ շրջանի վերջը սպասելու, կամ, եթէ ատ ալ ընել չէր ուզեր, պատրաստուել էր նախ յարժաքը և ետքը եղածներուն ծածկալ տար:

Ո՞վ գրեաւ հրաժարելու ցածներուն տեղը: — Երկու օրիորդներ, որոնց կարողութիւնը երկուներուն հետ եթէ բաղաւտութեան ալ չի գնենք — որովհետեւ անոնք արդէն բան մը չէին — գոնէ առաջիններուն գէշ ազգեկ ունեցած գործատուութիւնը կրնանք ընել թողուցք ան պարագան, որ նոր օրիորդները ազգականական կամ ունենալով հոգաբարձութեան անգամներն ոմանց հետ, հոգաբարձութիւնը կուրծնակապական ոգիի մէջ ալ մեղադրուեցաւ հասարակութեան:

Աս ամենէն ետք Պ. Պոնտուքեանը անշուշտ չի կրնարով տանիլ տիրող պայմանները, հրաժարեցաւ, և ասոր տեղ ալ բերուեցաւ օմի ինչ որը Գլուխը Միքայէլիան, որուն գէթ թողունք Յիլիպէի մօտաւ որ անցեալի Երիտասարդութիւնը, ալ նաեւ Բողաքը անգամ բողոքած է ուսուցչութեան իբրեւ աշխարհար մարդ, որ աղերս օղամբանախանձի է:

Ուրիշ ուր աս մարդը... Եւ վերջապէս վարժարանը ինկաւ ան վիճակին մէջ, որ այսօր մէկ հասարակող ուսուցիչ չի կայ և գտնուածները ինքզինքներն կառավարել գիտնալու պէտքը ունին դեռ, և այսպէս կրբուեցաւ ամբողջ շրջանը...

Ես չորդ անգամ ալ այս քայլերուն հետեւանքին վրայ:

Թղթակցից

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սալմաստ. 18 Նոյեմբեր 903

Կարելի է համարձակ կերպով ասել, որ այժմ Սալմաստը չափազանց խաղաղ գրովածան մէջ է գտնուում շնորհիւ իւր այժման ընդհանուր կոստումարչուպետ Մէջիտի-Սալմանէին:

Ամբողջ պարսկական կոստումարական շրջանում, միակ և առաջին տեղն է բռնում Մէջիտի-Սալմանէի իւր չափից դուրս քաղաքակրթուած ազատամբան բնութարարութեամբ:

Մէջիտի Սալմանէի նորութեան շատ սիրահար է, ոյժերը ներածին չափ աշխատում է մտցնել իր անասուններում նոր մշակուած օրէնքներ և նոյնպէս ժողովրդին բարձրացնել ներկայ ընկած գրութիւնից և առաջ մղել թէ կուտուրսպէս և տնտեսապէս, հակառակ պարսիկ ժողովրդեան մոլեռանդ ներկայացուցչներին: Մուրա-Մէջիտաներն են, որ միշտ վատ են խօսում նրա մասին:

Մէջիտի-Սալմանէի մի առանցնայատուկ և բարձր կոչման էլ նա է, որ բոլոր ժողովրդեան հետ մի եղանակով է վարում, առանց ուշք դարձնելու կրօնի, ազգային ևն. խտրութեանց:

Մի խօսքով նա աւելի մարդասէր էր այդ տեսակետներից, քան թէ մի քրիստոնեայ կառավարութեան կայսրից և նրա լիրք պաշտօնեայ Գալիցիաներից:

Պարզ է որ այդ տեսակ մարդուն չեն կարող սիրել քիւրտ տարբեր և դրա համար է, որ Մէջիտի-Սալմանէ քրտի ա-

նունը լսելիս միշտ զգուանք է յայտնել զէպի այդ աւագակաբարոյ և ուրիշի հաշուով ապրող ձրիակերներին և ուր որ նա գտնուել է, այնտեղ վերացել են քրդական աւարառութիւնները, ամենափոքր զէպոմ կատարողներին թնդանովի, զնդակների զօհ է դարձրել:

Իայց շնայած Մէջիտի-Սալմանէի այդքան խիստ լինելուն զէպի քրտերին, այնուամենայնիւ նրանք էլի երբեմն սխում են իրենց թաւան-թուանը: Հոկա. 18ին, Սալմաստի հիւսիս-արեւմտեան սահմանում ապրող քիւրտ Ամար ազան յարձակում է Սալմաստի գիւղերից մէկի՝ Աարտաշի վերայ և քշում է այդ գիւղի բոլոր տաւար ու ոչխարը: Մի քանի օրից յետոյ յաջողուում է Մէջիտի-Սալմանէի համոզել այդ քրտին իրեն մօտ գալ և պարզել ստանալ:

Իայց քիւրտ ազան զաւուն պէս մի քանի ժամից յետոյ, Մէջիտի-Սալմանէ հրամայում է պարսիկ ձիաւորներին բռնել բոլոր քրդերին, որոնց թիւր 40ի հասնում էր:

Պարսիկ ձիաւորներին յաջողում է քրդերին յանկարծակիի բերել, միջոց շտաղով վախշելու: Երկուսի գլուխը կտրում են, իսկ Ամար ազանին և երեքին ձերբակալում են: Երեկոյեան գէմ մէկին դնում են թընդանովի բերնին և կրակում: Իսկ Ամար ազանին և մնացած երկուսին ուղարկում են Աւարի: Այս բոլորին դնում են նոյնպէս թնդանովի բերանը: Երանի թէ Մէջիտի-Սալմանէ մնար միշտ

Սալմաստում և յաջորդեր մնացած աշխրէթներին նոյն բազդին արժանացնել և այնուհետեւ ոչ ոք չէր համարձակել հարստահարել խեղճ աշխատող ժողովրդին:

Մտազայ տեսլու, որ կամար ազան այն քրդերիցն էր, որ սրբազան պարտականութիւն էր համարում հայ արիւն թափելը և չէր յազնուում հայ արիւն խմելու:

1891 թ. ին խոյ գաւառի հայաբնակ վառ գիւղը աւարի ու կոտորածի են թարկւեց վերոյիշեալ Ամար ազանից: Անգու թ աւագակը չէր խնայել մինչեւ անգամ ձիւկեր սղաններին սրէ անցկացրեց: Այդ կոտորածի մանրամասնութիւնը պատմում էր ինձ իր ընկերներից մէկը, որը մի հրաշքով ազատուել էր կոտորածից:

Գար գին

ՀԱՅԿ ԲԱՐՁՐԱՒԱՂԱԿԸ ԵՒ ԱՆԻ

(Ճանապարհորդական անհրազուրկն Sof. Porguխի)


(Շար. Ասխուրդ քիւն)

Թիֆլիզի-Աղէքսանդրոպոլ-Կարսի գիծը շատ զուրա կարող է երկարել նաեւ զէպի Կարին, Կիլիկիա եւ Միջագետք, Իայց ասիկա հեռաւոր ճորագիր մըն է: Առ այժմ ուսերու խորհրդածութեան աւարկան դարձած է Գարիճ հասնել, Ասով Աղէքսանդրոպոլին մինչեւ Կարս տանող գիծը պիտի դառնայ զլուսուր գծին մէկ ճիւղաւորումը: Հայկ հին բնիկ մը առջեւէն անցնելով Պոզոտային վրայէն՝ նոր շինուելիք երկաթուղիի գծի ուղղութեամբ մէկ ու կէս ժամ երթալէ վերջ Անիի ճամբան շեղեցաւ

ղէպի ձախ: Այստեղէն կանցնի կարսի գետը, որ յետոյ Սրբաշոյն հետ միանալով Արաքսի մէջ կը թափի: Գետի վրայի կամուրջը այնքան խախուտ էր, որ մենք ստիպուած եղանք կառքէն վար իջնել և ստքով անցնել կամուրջը: այնուհետեւ սովորական ճամբան բռնելով ձիւրը առաջ քնեցինք: Երկիրը բաւականին խիտ բնակչութիւն ունէր, շատ սնագամ սնցանք հայկական զիւղերու մէջէ: հողերը մշակուած էին եւ դեղացիքը կաշխատէին իրենց արտերուն վրայ: Կայրենի երեւոյթով հովիւները կարածէն իրենց սովակուր սխարներու հօտերը: Անոնք ձուքերին ունէին երկայն ցուպեր եւ գլուխին դրած էին բրդոտ գտակներ: Թաւամուղ շուներ կը շրջէին հօտին շուրջը: Ինչ հեռու ցնիծատ առուի մէջ մեծ հաճոյքով պտուկած էին գիւղին գոմէշները: ասոնց վերայ կը հսկէր պղտիկ աղայ մը: Սրբաքսի հովիտէն անցանք, հոն կը փչէր գարնանային մեղմ զեփուտ մը, բայց հովը այստեղ խտացաւ, որովհետեւ հոս կը գտնուէինք էջմիածնէն 500 մէթր բարձր անդի մը վրայ:

Երկու օր ճանապարհորդելով Արագածի երկու երրորդ մասը կտրած անցած էինք եւ հիմա հրաբխային պատառոտած գագաթը մեր ձախ կողմ կը մնար: Այլ կողմէն մէկ քանի մղոն հեռաւորութեան վրայ կը բաւարանային Ալաւա լեռներու գլուխները, զորս մենք Աղէքսանդրոպոլէն տեսած էինք: Այս լեռները կը յասանէին Անի գիւրքը: որովհետեւ երբ արեւը մար մտնէ անոնք Բագրատունեաց հին եւ աւերակ քաղաքին վրայ կը տարածեն իրենց հսկայ ու մոայլ շուքը: Հիմա ես կը գտնուէի Հայոց թագաւորական տան կեդրոնական գաւառին՝ Շիրակի մէջ աղբը: Կէս օրին հասանք երկու բլուրներու ստորոտը, ուրկէ ճամբան զէպի Անի կերկարէր: Իլուրներու վրայ կային հին պարիսպներու մնացորդներ: Աստուց վրայէն Անի կերեւայ, ըսաւ կառապանը ետ դառնալով:

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ



(26)

ՆՈՒՆԻ Մ. Զ. - ԻՆ
ԳԼՈՒԽ Դ.

Մարկոսովը սառնց ուղարկութիւն գարձելու կնոջ բարկութեան վրա, աւելի մարդու սիրտ տրաքացող պաղարկութեամբ շարունակեց

—Կը ցանկանա և կը համաձայնիս. լաւ կին ես. մինչեւ անգամ դու իւր իրան կը տանես և կը յայնձնես օրերուդ Գարտաշեանին:

—Ուրեմն ուզում ես բռնանալ իմ վրա. տեսէք, պարտներ, խօսքը հիւրերին ուղղելով, ասացի հայր մէջ տեղ է գալիս. հա՛, հա՛, հա՛: Ապա կրկին ամուսնուն դառնալով, իմ խօսքը վերջնական է և ես քեզ չեմ ենթարկվի:

—Իմ ասածս բռնակալութիւն չէ. ես կատարում եմ իմ հոյակապ պարտականութիւնը, վնաս չունի. այսքան տարի ես քեզ ենթարկվեցի, այս քէ-պէս էլ դու ինձ ենթարկվիր: Զէ՛ որ ամուսնական զոյգորի մէջ զիջողութիւնները վտխարածաբար պէտք է լինեն ընտանեկան կեանքի ներդաշնակութիւնը պահ-

պանելու համար:

—Դու ինձ ենթարկվել ես ամենաչնչին խեղճներին մէջ. իսկ հիմա գործը վերաբերվում է իւրիայի դաստարակութեան: Ուրեմն դու իբրև խորամանկ հայ չնչին բաների մէջ, զիջել ես, օրպէսզի այսպիսի ծանր խեղճութեամբ ինձ զիջել տաս:

—Մեղք բեմ, եթէ արամազդութիւն ունես ինձ վերաբերել, ինքզինքդ մի կորցրու և վերաբերանքդ հայութեան մի ուղղի. յոնքերը կիտակով ու շոր կերպով ընդմիջեց Մարկոսովը:

Ես քեզ զիջողութիւն եմ արել և իւրիայի դաստարակութեան վերաբերմամբ ամբողջ ուրիշ տարի դու ես դաստարակել, որի պատճառով նա ոչ մի հայերէն բաս չը դիտէ: Մինչեւ տասնվեց տարեկանը, այսպիսի երկրորդ ութնամեակի ընթացքում իւրիան լի ուզած ձեռով պէտք է դաստարակվի: Այնուհետև կրկին քո անմիջական հոյողութեան տակ կը մնայ:

Այս է իմ վերջին խօսքը տիկին և մեր հիւրերն էլ թող վկայ լինեն:

Իմ աղջիկն է, իբրև հայի աղջիկ էլ պէտք է մեծանայ: Դեռ շատ ուշ եմ ըմբռնել այդ: Մինչև օրս, քեզ հետ ամուսնանալուց յետոյ, իբրև հայ չեմ մտածել բայց այս զէպքում մտածում եմ և ըստ այնմ պէտք է գործեմ:

—Ձե՛ս կարող...
—Կարող եմ և այդ դու գործով կը տեսնես:

Մարկոսովի վերջին խօսքից յետոյ Մարտիան այնուս իրեն զգալի չը կարողացաւ, արմնաշկա խօսքը շրպտեց ամուսնուն երեսին, ու մեծ զգուշիւնով սեղանից հեռանալով մըտաւ իր սենեակը:

Իւրիան փոթաթվեց հօրը վզովը ու սկսեց լալ. Հայրը սկսեց փոքրիկին համբուրել նրա աղանջին շնչալով:

—Ինչ չը կայ աղջիկս, մայրիկը մի քիչ հիւանդ է:
Հիւրերը, ճնշված ընտանեկան փոթորկուտ այդ տեսարանից՝ լուռ ու մուռն սկսեցին մտածել. ոչ ոք սիրտ չէր անում այդ անհաճոյ լուրերը խանդալելու:

Վերջապէս իւրիան լուրերը խզեց բարձրաձայն հօրը դիմելով:
—Իայց հայրիկ, ինչո՞ք բժիշկ չես կանչել տալիս երբ մայրիկը հիւանդ է:

—Այդ հիւանդութիւնը առանց բժշկի կանցնի, աղջիկս:

Նառնեց անհոյս սիրտ առաւ խօսելու:

—Իայց պարոն Մարկոսով, շատ խիտ խօսեցիք Մարտիայի հետ. եթէ դուք հայր էք, նա էլ մայր է. երկու սղ էլ հաւասար չափով իրաւունք ունէք խառնվելու իւրիայի դաստարակութեան գործին:

—Ոչ, չոր կերպով պատասխանեց Մարկոսովը. ես մի քիչ աւելի ունեմ քան մայրը. թէեւ մինչև օրս այդ իրաւունքով չեմ օգտուել, բայց այստուհետեւ ուզում եմ զոնէ հաւասար չափով օգտուել:

—Իայց օրէնքը նրա կողմն է. նա օրէնքով կարող է ձեզ արգիլել իւր աղջկայ հայկական դաստարակութիւն տալէ:

—Օ՛հ, չեմ կարծում որ Մարտիան օրէնքի դիմէ. այն օրէնքին, որ Ռուսիոյ բռնակալներն են ստեղծել և ո՞նց ամենակատաղի թշնամիներին մէկն է համարվում և Մարտիան...

Միթէ՞ որու ազատամիտները այդքան անհետեւողական պէտք է լինէք, ձեր քիջին հակառակ գնացողներին հանդէպ:

(Շարունակելի)

Ուղեկիրցս-քահանան-ալ առաջին անգամն էր, որ Անի կերթար: Ես սկըսայ անհամբեր դառնալ: Վերջապէս ըլլորին վրայ հասանք: Ես կառքին մէջ ուզի ելայ եւ կառապանի ուսերուն վրայէն գէպ առաջ նայելով բացազանչեցի: «Այս է Անին»: Հետուն մեր աչքին առջեւ կը տարածուէր տխուր աւերակներու ամայի դաշտ մը, որուն մէջտեղը կը բարձրանար գոթէթ մը, հակայ բոյց բոլորովին կործանուած գրութեան մէջ: —«Այո, այս է Անին», պատասխանեց կառապանը պաղարկունովեմամբ: Գլուխս շարժելով ես տեղս նստեցայ: Գանի մտերմանք այնքան որոշ կերպով մեր աչքերուն առջեւ ցցուեցաւ Անիի ամբողջական եւ բերդերու հըզոր տեսարանը: Գերեւս 1000 մէթր տարածութեան վրայ կերկարէր հըսկայ շրջապատ մը, շինուած կարմրագոյն խորանարդ քարերով, զարդարուած խաչածե սեւ խիճով եւ ուրիշ պատկերներով: Երջարկժըկարելով վեր կը բարձրանային մտաւարակէս քառասուն աշտարակներ հսկայ մեծութեամբ ու մեծ ծաւալով: Աստուծէն իր բազանչիւրէն վերջ փորուած էին քառասուն փոսեր:

Երբ մեր կառքը Անիի կործանուած մէջ դունն ներս մտաւ, ես միայն այն աստեան տեսայ, որ երկու պատեր զուգահեռական կերպով շրջապատած էին քաղաքը: Աստուծոյ զունքը սակայն իրարու դիմաց չէին բացուեր. ուստի ստիպուած եղանք զեռ երկու պատերու մէջ տեղէն բաւական տեղ երթալ քաղաքին բուն դուռը գտնելու համար: Հիմա մենք Անիի մէջ էինք: Գերմ. Փոխադր. Մարգարէսունի (Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՒՕՆԻԱ

(Շար. Եւստորդ քիւիւն)

Նոյն դառն ու անհանգուծելի կացութեան ենթարկուած է Մակեդոնիան Հայաստանի անբաժան բախտակիցը: Հակառակ մեծագործ հռչակուող պոռնիկ բարենորոգումներու՝ հետեւեալ մէկ քանի իրողութիւնները մեր բնութեցողներուն պիտի կրնան հասկցնել թէ Մակեդոնիոյ քրիստոնեաներն ալ նոյն դաղանութեան զորհրդաբաժան են, ինչպէս Հայաստանի քրիստոնեաները, և թէ այդ աւստրո-ոստական բարենորոգումները մազաչափ փոփոխութիւն մը չեն կրցած մտքնել իրաց վիճակին մէջ:

1. Հակառակ արուած սուլթանական խոստումներուն, բոլոր փախտական պուլկարները, որոնք իրենց գիւղերը վերադառնալ կը փորձին, կը բանտարկուին ու շարժարանքներու կենթարկուին:

2. Տէմիր Հիսարի շուկային մէջ զօրքերը դիտմամբ հրդեհ ձգած են, որպէս զի կողպտնաթուր խանութները թալանուեր են զինուորներէն: Կառավարութիւնը չէ կրցեր ոճիրը պարտկել ու քննութիւն մը բացել է և 60 զինուոր երեք ամսուան լանտարկութեան դատապարտուեր

է: Զոհերուն 5.6 ոսկի հատուցում կը տրուի:

3. Գրք-Քիլիսէի մէջ 52 գիւղեր հրդեհուած ու թալանուած են զօրքերէն ու ամբոխէն:

4. Խուրք սպայ մը զէնք փնտռելու պատրուակով այնքան սաստկօրէն շարժարեւ է շատ մը գիւղացիներ Սէրէզի շրջակայքէն, որ խեղճերը մահամերձ վիճակի մը հասեր են: Սէրէզի կողք բոլոր գիւղացիները զինուորներու խճգժուութեան զոհ կերթան:

5. Սքիւպի նահանգին մէջ միայն վերջին մէկ ամսուան մէջ այնքան բազմաթիւ սպանութիւններ, առեւանգումներ, թալաններ, շարժեր տեղի ունեցած են, որ միայն մի հոտ արձանագրել անկարելի է: Ոճրագործները ոչ մէկ տարբերութիւն չեն դրած կնոջ կամ տղուն, յղինքու և կոյսերու միջեւ, և վայրագութիւնները իրենց բոլոր զարհուրելիութեամբ կատարուած են:

6. Նոյն հանգի գործողութիւնները տեղի ունեցած են նաեւ Գրք-Քիլիսէի նահանգին մէջ, ուր նաեւ բազմաթիւ եկեղեցիներ սլքապղծուած և զինուորներու ու ամբոխին ապաստանորան եղած են:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պաքուէն ընկեր մը մեզ կը գրէ:

«Դալիցիին տեղը առժամանակեայ կերպով իբր տեղեկապահ նշանակուած է Տրէչէ: Թէեւ իշխանի հիւանդութեան մասին ուսական լրագիրները կը գրեն, թէ լաւ է, բայց մասնաւոր աղբիւրէ ստացուած տեղեկութիւններու նայելով բժիշկները գրեթէ յոյսերին կտրած են իր ապաքինման մասին:

Եկեղեցական կալուածները մի քանի տեղեր վերջնականապէս գրաւուած են, բայց հայ հոգեւորականներու կողմէն ունէ ստորագրութիւն չէ տրուած:

Ճարմըգատ եղած միջոցին Հայրիկէն յստացած նամակին պատասխանը Նիքոլա Բ. տուած է Բէթերսպուրիէն, նամակը գրած է նախարար Բլեյլէ և յայտնած, որ յունիս 12 օրէնքը անփոփոխելի է, հստեւարար կաթողիկոսին խեղիւրքը կը մնայ անհետեւանք:»

—Ուս կառավարութիւնը փակած է Արշիի Հայոց թեմական դպրոցը, ուր կը յաճախէին հարիւրաւոր գիտութեան ծարաւի հայ երիտասարդներ:

—Ղմիրաբագի Պ. Ստեփան ձմարտախօսեան 30,000 ֆր. արժողութեամբ կալուած նուիրած է ազգին:

Այս բարի սովորութիւնը վերջապէս կողկասէն անցաւ Խրքահայոց մէջ: Երբ պիտի շարժին արդեօք Բուլղարիոյ հայ հարուստները, որոնց թիւին տակ մեր դպրոցները կը կաղան ու կը կաղան:

—Ուրախ ենք վերջապէս ծանուցանելու, որ Եղիշէ վ. Մուրատեան հեւացուցուած է Ստրպատականէն և անոր տեղ առժամանակեայ փոխանորդ նշանակուած է Միսրոպ վ. Մազսուրեան:

—Պօլսեցի տիկին մը 100 ֆր. նուիրեր է Խոսեփիլի Գալֆեան որբանոցին: Ուրիշ տիկին մը նուիրեր է կարի մեքենայ մը:

—Ղլիւսմար զեռ շունեցաւ իր կաթողիկոսը: Կաթողիկոսանու փոխանորդ կարգուած է Պետրոս վ. Գրիգորեան:

—Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Գեորգ Եպիսկոպոս Երեցեան հրատարական տուեր է: Սանկալի է, որ այդ անարժան եկեղեցականը հեռանայ այդ պատասխանատու պաշտօնէն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընդդիմականները ժողով գումարելով ցրուեցին պուլկար ժողովրդին ուղղուած յայտարարութիւն մը, որուն մէջ կը բողոքեն Սօպրանիէյի մէջ խօսքի ազատութեան դէմ եղած բռնութեան մասին: Յայտարարութիւնը ստորագրած են 39 բնասիրտաններ:

—Ազգ. ժողովին մէջ առաջարկուեցաւ Մակեդոնական փախտականներուն համար եկած ապրանքները և անասունները առանց մարտի ներս ընդունիլ: Առաջարկը ընդունուեցաւ:

—Երուսաղէմի Բոքով առաջարկեց 250,000 ֆր. յաւելում մը ընել պիւտճէին վրայ ճանապարհներու կտննաւորման համար: Բէթքով յայտնելով որ այդ նպատակին համար յատկացուած 1,000,000 ֆր. կը բաւէ, առաջարկը մերժեց:

—Պուլկար կառավարութիւնը պաշտօնապէս հերքեց Թուրքիոյ երկու պետութեանց գեւապաններուն հաղորդած այն բոլոր լուրերը, զորս ընթերցողը կը գտնէ մեր այս օրուան «Թուրքիոյ» բաժնին մէջ: Կառավարութիւնը իր կողմէն բողոքեց որ կանոնաւոր անցագրեր ունեցող պուլկարները չեն ընդունուիլ Թուրքիոյ սահմանէն ներս:

—Պելլրատի ուսանողները գրութիւն մը ուղղելով Սօֆիայի ուսանողութեան՝ կառավարկեն Մակեդոնիոյ ազատութեան ի նըպատ գործելու համար համեմարշխութեան մը հանգիլ: Մի.

եւնոյն ժամանակ անոնք կը յայտարարեն՝ թէ իրենք հեռու են ամեն շովինիստական զգացումներէ և Մակեդոնիոյ խեղիւրքը կընդունին իբր մարդկայնական հարց մը: Այս նպատակով գործելու համար Սօֆիա ընտրուեցաւ հինգ հոգիէ բաղկացած մասնախումբ մը:

Գերմանիոյ պուլկար ուսանողներն ալ յանձնախումբ մը կազմելով որոշեցին ինչպատ Մակեդոնիոյ գաղթականներուն հանդանակութիւն մը բանալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Գուրը Աւստրիոյ և Ռուսիոյ գեւապաններուն բողոքազիր մը զրկելով յայտնեց՝ թէ յեղիփոխական շեկավար Աթանասով Քիւսթենտիլ հասած է և Բուսելիի մէջ զէնք ու ումբ կը բաժնէ, թէ Սարաֆով վիճենական պանքի մը մէջ ստակ դրած է զէնք զենու համար, թէ Ֆրանսացի և իտալացի պաներ պատրաստականութիւն յայտնեցին մասնակցիլ գաշնան ծագելիք ապստամբութեան:

—Ռուսիոյ և Աւստրիոյ գեւապանները խիստ պահանջ գրին, որ Գուրը շուտով ընտրէ իտալացի ոստիկանական սպան և Մակեդոնիա զրկէ ոստիկանութիւնը կազմակերպելու համար: Հակառակ պարագային սպանացին պիտի սեփական ուժերով գործեն:

—Պուլկարեան Էրզարքը Մակեդոնիոյ մէջ ստակ բաժնելու համար վէլիքին արասնութիւն ուղեց և բողոքեց կատարուած խտրութեանց դէմ:

ՍԵՐՊԻԱ

Պելլրատի ուսանողները Ծրանսայի գեւապանատան առջեւ հաւաքուելով համակրութեան ցոյցեր ըրին, որովհետեւ Ծրանսայի գեւապանը Պելլրատէն չէ մեկնած:

ՅԲՍՆՍՍԱ

Թորհրդարանին մէջ վիճարանութեան առարկայ գարձաւ նոր տարուան պիւտճէն:

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

«Դրոշակի նոյնմբերի թիւր: Բովանգակութիւն, — Մակեդոնական շարժումը: Թասենի ընդհարումները, Հայկ. ցոյցեր կովկասում, Թղթակցութիւններ Հայաստանէն և Կիլիկիայէն, կովկասեան խորրիկներ, Հայաստան և Մակեդոնիա:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна